| | | Ռ. | Կ. |
|---|---|---|---|
| 19 | Մելիտօպօլի Տ. Վահան աւագ քահ. Մամիկոնեանի միջոցով . . . . . . . | 1000 | — |
| 20 | Տաշքենդի Տ. Մարկոս քահ. Տէր-Մկրտչեանի միջոցով Աղաջան Իսրայէլեանից . . . | 100 | — |
| | Ընդամենը | 28438 | 24 |
| | Նախորդ ամիսներին հրատարակած գումարներ | 3047331 | 12 |
| | Համագումար | **3076769** | **36** |

Երեք միլիոն եօթանասուն և հինգ հազար եօթ հարիւր վաթսուն և ինն ռուբ. 36 կոպ.:

ՄԵ. Գէորգեանց

## ԴԻՄՈՒՄՆ

Տպարանական Վարչութիւնս խնդրում է այն եկեղեցիներին և մասնաւոր անձանց, որոնց մօտ կան Ձայնագրեալ Շարականի օրինակներ ուղարկել Տպարանի հասցէով կամ տպարանի վաճառելի գրքերի հետ փոխանակելու կամ արժէքը դրամով ստանալու պայմանով:

Վարչութիւն Տպարանի.

Խմբագրութիւնս շնորհակալութեամբ ստացել է

1. Վ. Վալադեան—Ռազմական պատկերներ. Թիֆ. 1917 թ. 75 կ.
2. К. Коротковъ—Семирамида, Темучинъ М. 1917 г. ц. 1 р.
3. Տեղեկագիր Նախիջևան-Շարուր-Դարալագեազ-Սալմաստի Եղբ. Օգն. Կոմիտէի. 1914 թ. դեկտ. 23-ից մինչև 1917 թ. յունուարի 1-ը:
4. Հայը Ցովքի օրում—Ս. Քամալեանցի—Թիֆ. 1917 թ. գ. 50 կ.
5. The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915—16—Visc ouit Bryce.
6. Գ. Էգիլեան—Գաղթականական Որբանոցներ. Թիֆ. 25 կ.

Խմբագրութիւն «Արարատ»-ի

## Մայր Աթոռի Տպարանի գրատուն

Վաճառւում են «Արարատ» ամսագրի հին համարները սկսած 1868 թուից մինչև 1917 թ. բացի 1871, 1872, 1873, 1881, 1882, 1883, 1884, 1885, 1886, 1887, 1891, 1904 և 1905 թուականները, որոնք սպառուած են.

Տարեկան համարի գինն է 4 ռ. անկազմ.

Վարչութիւն տպարանի.

---

Լոյս տեսաւ և վաճառւում է

## ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ.

Տարրական դասընթացք, Բ. տպագրութիւն (անփոփոխ).

Գինն է 50 կ.

---

Անցեալ տարուայ դեկտեմբերի 18-ին Նոր Նախիջևանում կնքեց իւր մահկանացուն Փիլիպոս Վարդանեանը, որ ամբողջ կեանքը նուիրած լինելով ազգի մատաղ անդաստանի մշակման սուրբ գործին, իրաւամբ և արժանապէս վայելում էր վաստակաւոր մանկավարժի, բեղմնաւոր թարգմանչի և ազնիւ ու շիտակ հայրենասէրի հռչակ հայ հասարակութեան ամեն խաւերում.

Հաւատացած լինելով, որ արդիւնաշատ հանգուցեալի բազմաթիւ աշակերտները և յարգողները կը կամենան անշուշտ բարի և կայուն գործով յաւերժացնելու աշխատաւոր հայ վարժապետի յիշատակը, Նոր Նախիջևանի Եկեղեցական Հոգաբարձութիւնը վայելուչ համարեց Փիլիպոս Վարդանեանի անունով գրական մի ֆոնդ հիմնելու, ուստի և որոշեց մամուլի միջոցով հրաւէր կարդալ հանգուցեալի աշակերտներին և յարգողներին, որ սոյն ֆոնդի կազմութեանը իրենց մասնակցութիւնը չզլանան և դրամական առաքումները բարեհաճին ուղղել Нахичевань на Дону, въ Контору Церковнаго Попечительства, для Литер. Фонда.

Նախագահ Ա. ՍԱՂԹԻԿԵԱՆ

Քարտուղար Յ. ԲՈՂԴԱՆԵԱՆ

## ԱԶԴ

Սոյն համարի հետ դիւղական քահանաներին ուղարկւում է «Կրօնական-Բարոյական» խորհրդածութիւնների Բ. կամ Գ. մասերը։

Որովհետև տպարանի գրատանը իւրաքանչիւր հատորից պահանջուած քանակութեամբ օրինակներ չկան, ուստի ոմանց Բ. մասից է ուղարկւում, ոմանց Գ.։ Յունուարի համարում թէև յայտարարուած էր, որ ուղարկւում է Ա. մասը, բայց որովհետև օրինակները պակասեցին, վարչութիւնը ստիպուած եղաւ ուղարկել նաև Բ. մասից։ Այսպէս կլինի և յետագայում։

Գրքի մասերը միմեանց շարունակութիւն չեն կազմում, այլ անկախ խորհրդածութիւններ են։

Վարչութիւն Տպարանի.

---

## ԱԶԴ

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

## 1760—1870 Թ.

Գրեց

ԱԲԷԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԽԻԹԱՐԵԱՆ

Շնորհիւ Բարձր. Տ. Սահակ վ. Ամատունու ջանքերի գտնուած է Աբէլ արքեպ. Մխիթարեանի Հայոց պատմութիւնը, որը ժամանակին կորած էր համարւում. գրաբար լեզուով. որը շարունակում է Չամչեանի պատմութեան վերջին թուականից մինչև 1870 թ. բաղկացած է 4 հատորից. քառածալ թղթի վրայ 351 երես։

Խնդրւում է պատշաճ հայ ընկերութիւններին և մասնաւոր անձանց յանձն առնել սոյն կարևոր աշխատութեան տպագրութիւնը։

Դիմել՝ Эчміадзинъ Редакція журн. «Араратъ».